

Հուշան Դեպրոսյան, 2008  
«Ես դեմ եմ  
Վիդեո, 1:20 ր.  
Shushan Petrosyan, 2008  
I am against  
Video, 1:20 min




Աստղիկ Մելքոնյան, 2008  
Մեր նմանները շատ են,  
Ակցիա, Վիդեոդոկումենտացիա  
Astghik Melkonyan, 2008  
Many alike us  
Action, Videodocumentation




Աննա Փափազյան, 2008  
(Սիրիա)  
Հավասարակշռություն  
Լուսանկարների շարք  
Anna Papazian, 2008  
Balance  
Photoseries



Ռաֆֆի Ղազարյան, 2008  
Մենք դա կարողությ ենք անել  
Վիդեո 1:00 ր.  
Raffie Davtian, 2008  
We can doooo it  
Video, 1:00 min



Մերի Մուն, 2007  
Երեք զրույց (մաս 2, 3)  
Վիդեո, 32:20 րոպե  
Mary Moon, 2007  
Three conversations (part 2,3)  
Video, 32:20 min



Տաթևիկ Մնոյան, 2008  
Ազատություն  
Հավասարություն  
Քույրություն  
Tatevik Mnoyan, 2008  
Liberty, Equality, Sisterhood  
C-print



Ծոմակ, 2008  
Ըմբոստ աղջիկները  
ըմբոստ գործեր են անում  
Պիտակներ  
Tsomak, 2008  
The rebellious girls  
do rebellious works  
Stickers



Լուսինե Թալալյան, 2008  
Վերագտնելու կորուսվածը  
Lusine Talalyan, 2008  
Refinding the lost  
Action



Վարվարա Մուսաելովա, 2008  
Թիրախը  
Վիդեո, 4:00 ր.  
Varvara Musaelova, 2008  
The Target  
Video, 4:00 min



Արմինե Վարդանյան, 2008  
(Իրան)  
«ՓԱՆՈՒՍ»,  
Վիդեո, C-տպագրություն  
Arminech Vardanyan, 2008  
"Escape",  
Video, C-print



Աննա Վարդանյան, 2006  
Անվերնագիր  
Վիդեո, 3:20 ր.  
Anna Vardanyan, 2006  
Untitled  
Video, 3:20 min



Մարինե Դարիբյան, 2008  
Ժամանակակից Վեներա  
Վիդեո, 1:40 րոպե  
Marine Gharibyan, 2008  
A Contemporary Venus  
Video, 1:40 min



Մելս Գեւորգյան, 2008  
Դ՛ մասնատել  
Ինստալյացիա  
Ստվարաթուղթ, գիպս  
Mels Gevorgyan, 2008  
Not dismember  
Installation  
Cardboard, plaster



Նեգար Թահսիլի Ֆահադան, 2005  
(Իրան)  
«Մի բնույթի...»  
Վիդեո, 3 ր.  
Negar Tahsili Fahadan, 2005  
(Iran)  
"Of one essence..."  
Video, 3 min



Գայանե Հոլակյան, 2007  
«Այս հուշարձանը անուն ունի՝  
Գայանե Հոլակյան»,  
Քանդակ  
Գիպս  
Gayaneh Cholakyan, 2007  
"This Monument has the Name",  
Sculpture  
Plaster



Մկրտիչ Տոնոյան, 2007  
Բետեր-ուտոպիա: որոշ կատարյալ  
նշաններ  
Յուղ/տպագրություն  
Mkrtich Tonoyan, 2007  
Hetero-utopia. Some Perfect  
Signs  
P-print



Նանա Մանուչարյան, 2008  
Պուպ-շոու  
Փերֆորմանս  
Nana Manucharyan, 2008  
Pup-show  
Performance



Արմինե Հովհաննիսյան, 2008  
«Ես այստեղ եմ» ... քաղաքում  
Վիդեոպրոյեկցիա  
Armine Hovhannisyan, 2007  
"I'm here... in the City"  
Videoprojection



Սոնա Բաղդասարյան, 2008  
«Մայր Հայաստան»  
Վիդեո, 4:00 ր.  
Sona Baghdasaryan, 2008  
"Mayr Hayastan"  
Video, 4:00 min



The Art and Cultural Studies Laboratory (ACSL)  
The Armenian Open University/  
Department of Fine Arts  
“GENDER TROUBLE”  
The International Exhibition

Curator: Susanna Gyulamiryan  
Assistant: Raffie Davtian  
Coordination: Darsna Roostomyan  
Marianna Hoshanitsyan

Duration: 07.04 – 08.04.2008

The Opening day: 07.04.2008, at 19:00

“Academia” Gallery  
Baghramyan, 24

«Ակադեմիա» Բաղրամյան, 24  
Ժամը 19:00  
Բացման օրը՝ 07.04.2008  
07.04.2008 - 08.04.2008

«ՂԱՍԵՁԱՍՏՈՒՂՈՒՂ ԴՎԵՆՍԵՆՂԳԻ»

տղտղախոսով փառաբանում և փոքրացնում արտաբանության գլխավորումը և փոքրացնում արտաբանության գլխավորումը

ցուցադրումը և ցուցադրումը

ցուցադրումը և ցուցադրումը

ցուցադրումը և ցուցադրումը

ցուցադրումը և ցուցադրումը

“Gender Trouble”

SUSANNA GYULAMIRYAN

The history of gender, after its initial unconscious effort to challenge the foundations of its own dependency, appeared as a striving for decentralization of the discourse responsible for its subjugation. In contemporary culture and contemporary thought one can notice an obvious turn in the epistemology of subjectivity, a paradigmatic turn which is marked by gender. It is not by chance that there is a terminological tension (trouble?) surrounding the word “gender”. It has become a trivial expression because of the often formal attitude present in the activities of the organizations addressing the problems of “gender” in Armenia. Gender problems which appear in social discourse in Armenia and even in programmatic statements of some Armenian politicians re-establish the “masculine” rights in a sense that they “generously” allow women (and only by word) to be equal with men. Moreover, whereas gender studies primarily employ the methodologies of feminist theories (not to forget about other critical discourses that are intermediated by feminist theories), the term “feminism” and the contributions of feminist studies are altogether ignored.

The name chosen for this project – “Gender Trouble” – is borrowed from the title of Judith Butler’s famous book.<sup>1</sup> In our case it refers to the ongoing *discursive* “gender trouble” of the last ten-fifteen years. Various attempts have been made to differentiate between genders and gender identities in the art practices of post-Soviet counties, particularly Armenia. The initiators of the shows under the demanding banner of “feminism”, it seems to me, have taken the formulation for granted. The question remains: Is it possible to talk about feminist art in the context of Armenia when the majority of women artists who take part in such thematic shows and who really employ feminist strategies in their works are not associated with feminist movements outside the scope of their art? It is indisputable fact that feminist orientations must be recognized as program and ideology which then have to be codified in art forms. Today we have the state of growing self-awareness about the incompleteness, uncertainty but also femininity (as a socio-cultural phenomenon) of the representational works. At the same time, there is the state of growing understanding of the notion of the aesthetical - when the feminine is able to identify, form and defend itself against the background of the Power and the hardening shapes of the predictability of this Power. Without this it is impossible to either form art strategies, or conceptualize and describe these strategies from the position of gender theory. It may sound paradoxical, but in spite of the absence of consistency and clear positions in feminist issues in Armenian art context, the topic itself remains open. Feminism is not uninteresting for Armenian artists and this is much better than the silence.

We preferred the word “gender” for this project since “gender studies” throughout the course of its development has investigated not only female and male subjectivities (which have been considered as opposites inside the traditional binary model), but also other types of subjectivities: heterosexual identities, queer identities - gay, lesbian and transgender identities. The term “gender” started to be used not only for describing homosexual (both male and female) structures but also for other types of contemporary identities, since contemporary culture has attached new methodological apparatus to the series of its investigations. As a result the concepts of racial, national, ethnic and other identities have also become matters of theoretical concerns. Unfortunately, the practices of gender marginalization and suppression of subjectivity (which have extended the scope of gender inequality in postmodern world) are not addressed in this project. But we hope that the desire to make this project annual (in parallel developing and carrying out series of lectures on the above mentioned topics) will encourage and support the formation of new artistic conceptions.

The works shown in “Gender Trouble” first of all address the initial trauma connected with the initiation, the trauma which is one of the chief motivators of artistic reflection. Interestingly, the few male participants (only two) also address feminine issues, particularly, the problems of representation of the feminine. Many works are concerned with breaking the established forms of traditional representation which have become part of the arsenal of traditional iconography and function as markers of patriarchal culture.

Translated by Vardan Azatyan

<sup>1</sup> Judith Butler, *Gender Trouble: Feminism and the Subversion of Identity* (New York: Routledge, 1990).  
J. Butler is the Maxine Eliot professor in the Departments of Rhetoric and Comparative Literature at the University of California, Berkeley.

Գլխավոր հովանավոր  
Հայաստանի Հանրապետության Մշակույթի նախարարություն  
General sponsor  
The Ministry of Culture of The Republic of Armenia



«Գեներտրոբլ» ցուցադրումը և ցուցադրումը «Gender Trouble»

«Գեներտրոբլ» ցուցադրումը և ցուցադրումը «Gender Trouble»

«Գեներային անհանգստություն»

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

Սեռի պատմությունը, սեփական կախվածության հիմքերը սասանելու սկզբնական անգիտակցական ճիգից հետո, դրսևորվեց որպես իրեն ստրկացնող դիսկուրսը ապակենտրոնացնելու ձգտում: Ժամանակակից մշակույթում և մտածողության մեջ նկատվում է սուբյեկտիվության իմացաբանության մեջ կատարվող ակնհայտ շրջադարձ, պարագիզմային տեղաշարժ, որը ձեռք է բերում գեներային դրոշմ:

Պատահական չէ «գեներ» բառի հետ կապված տերմինաբանական լարվածությունը (անհանգստությունը): Հայաստանում «գեների» խնդիրներով զբաղվող բազմաթիվ կազմակերպությունների կողմից իրականացվող գործողություններում և աշխատանքներում տեղ գտած այս հասկացության նկատմամբ հաճախ ձեռնարկված վերաբերմունքում այն վերածվել է ծեծված արտահայտության: Գեներային պրոբլեմատիկան, որը մեր երկրում ի հայտ է գալիս հասարակական դիսկուրսի և նույնիսկ որոշ քաղաքական գործիչների ծրագրային հայտարարություններում, վերականգնում է «մասկուլինության» (արականության) իրավունքներն այն իմաստով, որ կնոջը մեծահոգաբար թույլատրում է, և այն էլ՝ միայն խոսքով, հավասարվել տղամարդուն: Տեղին է ընդգծել և ֆեմինիզմի հասկացության, ֆեմինիստական ուսումնասիրությունների լիակատար անտեսումը այն դեպքում, երբ գեներային ուսումնասիրություններն առաջին հերթին օգտագործում են ֆեմինիստական տեսությունների մեթոդաբանությունը և, դրանցով միջնորդված, մեր օրերի այլ քննադատական դիսկուրսներ: Սույն գեղարվեստական նախագծի համար ընտրված «Գեներային անհանգստություն» անվանումը, որը փոխառված է Ջուդիթ Բաթլերի<sup>1</sup> նշանավոր գրքի վերնագրից, հղում է նաև վերջին 10-15 տարիների դիսկուրսային անհանգստությանը: Այս շրջանում կատարվել են ետխորհրդային երկրներում և մասնավորապես Հայաստանում տեղի ունեցող գեղարվեստական պրակտիկաներում սեռերը, սեռային ինքնությունները տարբերակելու փորձեր:

Նրանք, ովքեր ցուցահանդեսներ էին նախաձեռնում «ֆեմինիստական» պահանջկոտ խորագրի ներքո, չէին կարող կասկածի տակ չառնել բուն ձեռակերպումը՝ հարցնելով այն մասին, թե կարելի է հայկական գեղարվեստական համատեքստում խոսել ֆեմինիստական արվեստի մասին, երբ նմանօրինակ թեմատիկ նախագծերին մասնակցող եւ իրենց աշխատանքներում իրապես ֆեմինիստական ռազմավարություններ կիրառող արվեստագիտուհիների մեծ մասը արվեստի շրջանակից դուրս գիտակցաբար առնչված չէր ֆեմինիստական շարժմանը: Մինչդեռ անվիճելի փաստ է, որ ֆեմինիստական կողմնորոշումները պետք է գիտակցվեն որպես ծրագիր և գաղափարաբանություն, որ այնուհետև կողմնորոշում են գեղարվեստական ձեռներում: Այսօր առկա է ռեպրեզենտացիոն աշխատանքների անավարտության, հեղինդուկության, բայց նաև կանացիության՝ որպես սոցիալ-մշակութային երեւոյթի, աճող ինքնագիտակցության վիճակ, ինչպես նաև գեղագիտականի հասկացության, երբ կանացին ի վիճակի է ճանաչել, կազմավորել և պաշտպանել իրեն իշխանության և նրա կամխատեսելիության կարծրացող կերպերի ֆոնին: Առանց դրա անհնար է թե գեղարվեստական ռազմավարությունների ձեւավորումը, թե դրանց իմաստավորումը, թե դրանց նկարագրությունը գեներային տեսության դիրքերից:

Չնայած պարադոքսայնությանը գեների և ֆեմինիզմի հարցերում, հետևողականության և դիրքերի պաշտպանության բացակայությանը, այդուհանդերձ, թեման մնում է բաց, այն անհետաքրքիր չէ հայ արվեստագետների համար, ինչը շատ ավելի լավ է, քան համրությունը:

«Գեներ» բառի օգտագործումն այս գեղարվեստական նախագծի մեջ դարձավ գերադասելի, քանզի «գեներային ուսումնասիրությունները» զարգացման ընթացքում սկսեցին հետազոտել ոչ միայն կանացի կամ տղամարդկային սուբյեկտիվությունը, որոնք հակադրվում են ըստ ավանդական բի-նարային օպոզիցիայի մոդելի, այլև մի խումբ այլ սուբյեկտիվության տիպեր. հետերոսեռական, այսպես կոչված «բվիր»-ինքնություններ (տարօրինակ, էքսցենտրիկ ինքնություն)՝ գեյ-լեսբիական, տրանսսեռական ինքնություններ: Տերմինը հետագայում սկսեց օգտագործվել ոչ միայն համասեռական՝ ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանացի, կառուցվածքների, այլև ժամանակակից ինքնության ուրիշ տիպերի նկարագրության համար. ժամանակակից մշակույթը իր ուսումնասիրությունների շարքին կցել է նաև նոր մեթոդաբանական ապարատ, որը դիտարկում է ռասայական, ազգային և էթնիկական ինքնությունների հղացքները:

Գեներային մարգինալացման, սուբյեկտիվության ճնշման պրակտիկաները, որոնք ընդլայնել են գեներային անհավասարության սահմանները հետարդիական աշխարհում, ցավոք չարծարվեցին այս նախագծի ցուցադրանքների մեջ. դրանք դեռ կարող են ավելի լուրջ արվեստագիտական քննության և ուսումնասիրության, և հուսով ենք, որ սույն նախագիծն ամենամյա դարձնելու ցանկությունը (զուգահեռ զարգացնելով և իրականացնելով վերոնշյալ թեմաներով դասախոսությունների, քննարկումների շարք) կխրախուսի և կաջակցի գեղարվեստական նոր հղացումների ձեւավորմանը: «Գեներային անհանգստություն» նախագիծն տեղ գտած գեղարվեստական աշխատանքներն անեմից ավելի վերաբերում են ինիցիացիայի հետ կապված նախնական տրավմային, որն էլ դառնում է գեղարվեստական անդրադարձի խթանը: Հատկանշական է, որ նախագծի մեջ ներգրավված սակավաթիվ տղամարդիկ նույնպես դիմել են կանանց թեմատիկային, կանացիի ներկայացման պրոբլեմատիկային: Շատ աշխատանքներ նվիրված են ավանդական ներկայացման հաստատված ձեւերի շրջանակից դուրս գալուն, որոնք մտել են ավանդական պատկերագրության զինանոցը և գործում են որպես հայրիշխանական մշակույթի նշանակիչներ:

<sup>1</sup> Judith Butler, *Gender Trouble: Feminism and the Subversion of Identity* (New York: Routledge, 1990):  
Ջուդիթ Բաթլերը Մաքսին էլիոթ պրոֆեսոր է Կալիֆորնիայի համալսարանի (Քերկլի) ինտերոսության և համեմատական գրականագիտության ամբիոնում: